ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ԳՈՐԾԻՔԱՏՈՒՓ (ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ) «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ 4.0. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԴԱՏԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ» ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Supported by

Այս գործնական ուղեցույցն ու գործիքատուփը ստեղծվել են Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ «Պատմության մրցույթներ 4.0. պատմության քննադատական դասավանդման գործիքակազմ» ծրագրի շրջանակում: Ծրագիրը Հայաստանում իրականացվում է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ) կողմից՝ Քյորբեր հիմնադրամի, «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ և «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Գործնական ուղեցույցի և գործիքատուփի ստեղծմանն իրենց ներդրումն են ունեցել ծրագրի փորձագետները, ծրագիրն իրականացնող թիմը, ինչպես նաև ծրագրում ներգրավված 4 ուսուցիչներ, որոնք փաստագրել են իրենց փորձը, ինչն էլ ուղեցույցում կիրառվել է որպես գործնական օրինակ տարբեր բաժիններում:

Ներածություն

Դեռևս 2021թ.-ին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը միացավ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի և Բելառուսի գրասենյակների կողմից իրականացվող «Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» երկամյա ծրագրին: Արդյունքում, Հայաստանում առաջին անգամ իրականացվեց «Պատմության մրցույթներ» միջազգային նախաձեռնությունը, որը հիմնվել է Գերմանիայի Քյորբեր հիմնադրամի կողմից 2001թ. և անց է կացվում շուրջ 30 երկրում:

Ծրագրի[1] երկրորդ փուլը՝ «Պատմության մրցույթներ 4.0. պատմության քննադատական դասավանդման գործիքակազմ» (այսուհետ՝ Պատմության մրցույթներ 4. 0), մեկնարկեց 2023թ. հունիսին և ավարտվում է 2024թ. դեկտեմբերին:

Հայաստանում ծրագրի առաջին փուլի իրականացման համար Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը համագործակցում էր «Հազարաշեն» Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ-ի և «Պարադիգմա» կրթական հիմնադրամի հետ, իսկ երկրորդ փուլում՝ «Հազարաշեն» Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ-ի և «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի հետ:

Ծրագրի նպատակը հանրակրթական դպրոցների աշակերտների քննադատական մտածողությունը զարգացնելն է՝ պատմություն առարկայի շրջանակներում նախագծային ուսուցման և դասավանդման ու ուսումնառության նոր մեթոդների և ռազմավարությունների ներդրման միջոցով: Այս մոտեցման վրա է հիմնված Գերմանիայի Քյորբեր հիմնադրամի «Պատմության մրցույթներ» նախաձեռնությունը, որի ընթացքում մասնակիցները ինքնուրույն ուսումնասիրում են իրենց միջավայրի պատմությունը՝ տեղեկություն ստացողից վերածվելով տեղեկություն ստեղծողի: Սա խթանում է սովորողների անձնական պատասխանատվությունը և քննադատական մտածողությունը:

Ծրագրի յուրաքանչյուր փուլի համար ընտրվում է մեկ ընդհանրական և մեկ ազգային թեմա, որի շրջանակներում մասնակից աշակերտները և ուսուցիչները պետք է իրականացնեն հետազոտական նախագծային աշխատանք պատմություն առարկայից և մրցույթին ներկայացնեն իրենց աշխատանքները: Ծրագրի մասնակից 5 երկրների (Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, Բելառուս) համար առաջին փուլի ընդհանրական թեման էր

[1] Այս ուղեցույցում **«ծրագիր»** եզրույթն օգտագործված է «Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» և «Պատմության մրցույթներ 4.0. պատմության քննադատական դասավանդման գործիքակազմ» ծրագրերն իրենց մի քանի բաղադրիչներով նկարագրելու համար: Ծրագրերի բաղադրիչներից մեկը վերապատրաստված ուսուցիչների ղեկավարությամբ աշակերտական խմբերի կողմից հետազոտական նախագծերի իրականացումն է: Այս ուղեցույցում **«նախագիծ»** եզրույթն օգտագործված է պատմություն առարկայի նախագծային ուսուցման շրջանակներում աշակերտական խմբերի իրականացրած հետազոտական նախագծերը նկարագրելու համար:

«Մերժման և կարոտաբաղձության միջև. Խորհրդային և հետխորհրդային շրջանի պատմությունը ընտանիքներում և համայնքներում»՝ ԽՍՀՄ փլուզման 30-ամյակի կապակցությամբ։ Մասնավորեցնելով ընդհանուր թեման՝ Հայաստանի ազգային թեման սահմանվել էր. «Մոռանալու և հիշելու միջև. խորհրդային և հետխորհրդային հիշողության լանդշաֆտը համայնքներում և ընտանիքներում»։

Ծրագրի երկրորդ փուլի ընդհանուր թեման է. «**Ուսումնասիրելով պատմության վրա հիմնված քարոզչությունը Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում**», իսկ Հայաստանի ազգային թեման է՝ «**Պրոպագանդան որպես խորհրդային գաղափարախոսության գործիք Հայաստանի հանրային տարածքում, կենցաղում, մշակույթի և կրթության մեջ**»։

Ծրագրի առաջին և երկրորդ փուլերում բաց մրցույթով հավաքագրված ՀՀ հանրակրթական դպրոցներում «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն» և «Հայ եկեղեցու պատմություն» առարկաները դասավանդող 100-ից ավելի ուսուցիչ, նախապես ծանոթանալով ուսուցիչների համար պատրաստված մանրամասն ուղեցույցին, վերապատրաստվեց նախագծային ուսուցման, բանավոր պատմության մեթոդաբանության, ակտիվ պատմական մտածողության, աղբյուրների հետ աշխատելու ուղղությամբ։

Վերապատրաստված ուսուցիչներից 70-ը ցանկացավ շարունակել մասնակցությունը ծրագրին։ Նրանք ձևավորեցին աշակերտական թիմեր, ընտրեցին հետազոտական նախագծային աշխատանքի թեմա՝ ներկայացված ազգային թեմայի շրջանակում, կազմեցին հետազոտական պլան՝ ըստ նախապես տրամադրված ձևաթղթի։ Ուսուցիչների կազմած հետազոտական պլանները վերանայվեցին և հաստատվեցին ծրագրի փորձագետների կողմից։ Այնուհետև ուսուցիչները, իրենց աշակերտական թիմերի հետ, իրականացրեցին հետազոտական նախագծային աշխատանքներ։

Ծրագրի երկու փուլերում էլ նախագծերի իրականացման ողջ ընթացքում ուսուցիչներին իրենց խորհրդատվությամբ աջակցել են մենթորները։

Վերջնաժամկետի ավարտին առաջին և երկրորդ փուլերում մրցույթին ներկայացվեց համապատասխանաբար 46 և 39 աշխատանք։ Ժյուրիի գնահատման արդյունքում տարբեր անվանակարգերում հաղթող ճանաչվեց համապատասխանաբար 14 և 13 աշխատանք։

Ծրագրի երկրորդ փուլի առանցքային արդյունքներից է պատմության ուսուցիչների համար օգտակար գործիքակազմի ստեղծումը։ Պատմության ուսուցիչների հետ համագործակցությունը ինչպես նախորդ, այնպես էլ ընթացիկ ծրագրի շրջանակներում ցույց տվեց, որ նախագծերի գործնական իրականացումը դեռևս խնդիր է բազմաթիվ ուսուցիչների համար՝ հատկապես նախագծի/հետազոտության բոլոր փուլերում աշակերտների բովանդակալից ներգրավվածության առումով։ Ուսուցիչները մեծապես հետաքրքրված են նախագծային ուսուցումը որպես հայեցակարգ հասկանալով և գործնականում իրականացնելու հմտություններ ձեռք բերելով։ Ուսուցիչների մոտիվացիան պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրակրթության նոր չափորոշիչը ներառում է նախագծային ուսուցման պահանջ։

Այս խնդիրները հասցեագրելու համար ծրագրի կազմակերպիչների և փորձագետների խումբը որոշեց ստեղծել ուսուցիչների համար **գործնական ուղեցույց և գործիքատուփ՝** «Պատմության մրցույթներ» (3.0 և 4.0 փուլեր) ծրագրի մոտեցումներով պատմություն առարկայից հետազոտական նախագծեր իրականացնելու համար:

Գործնական ուղեցույցի մշակմանը մասնակցել է նաև ծրագրում ներգրավված 4 ուսուցիչ, որոնք փաստագրել են իրենց ընթացիկ աշխատանքն ու փորձը՝ նախապես մշակված ձևաթուղթ – հարցարանների միջոցով: Ուսուցիչների և աշակերտական խմբերի նախագծային աշխատանքի ընթացքը պայմանականորեն բաժանվել է 3 փուլի՝ ա. պլանավորում, բ. իրականացում - փուլ 1 (մինչև գարնանային դպրոցը), գ. իրականացում - փուլ 2 (գարնանային դպրոց, նախագծի ամփոփում և ներկայացում), որոնցից յուրաքանչյուրի համար մշակվել է աշխատանքների փաստագրման առանձին ձևաթուղթ – հարցարան[2]: Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո ուսուցիչները լրացրել և ուղարկել են ձևաթղթերը, որոնցից հատվածներ ներառված են ուղեցույցի հետագա բաժիններում՝ որպես իրական փորձի օրինակներ:

Ստորև ներկայացված է գործնական ուղեցույցի բովանդակությունը, իսկ գործիքատուփը կցված է հավելվածների և հղումների տեսքով:

Գործնական ուղեցույցը ներկայացնում է ծրագրի շրջանակում նախագծերի պլանավորման, իրականացման և ներկայացման հիմնական քայլերը, մոտեցումները և սկզբունքները՝ հիմնվելով նաև միջազգային լավագույն փորձի տեղայնացման վրա:

Ուղեցույցը բաղկացած է 6 բաժիններից, որոնցից առաջին երկուսը ներածական և տեսական բնույթ ունեն, իսկ մյուսներն արտացոլում են նախագծային ուսուցման տարբեր փուլերը և ունեն մի քանի մաս՝ ընդհանուր տեղեկատվություն, գործնական օրինակներ պատկերազարդումներով և/կամ ծրագրային ձևաթղթեր, ինչպես նաև ամփոփում ու խորհուրդներ ուսուցիչներին:

[2] Ձևաթուղթ – հարցարանները ներառված են գործիքատուփում որպես Հավելված 1:

Գործնական ուղեցույցի բովանդակություն

1. Ներածություն
2. Նախագծային ուսուցման պատմություն։ Ի՞նչ է նախագծային ուսուցումը։
3. Նախագծային ուսուցման հիմնական գործընթացները և փուլերը «Պատմության մրցույթներ 4.0.» ծրագրի օրինակով
4. Առաջին փուլ. հետազոտական նախագծի պլանավորում
5. Երկրորդ փուլ. հետազոտական նախագծի իրականացում
6. Երրորդ փուլ. հետազոտական նախագծի ներկայացում
7. Գործիքատուփ

2. Նախագծային ուսուցման պատմություն

Նախագծային ուսուցման մեթոդը անցել է զարգացման մի շարք փուլեր և այժմ համարվում է կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ ապահովելով սովորողների համապարփակ զարգացումը: Չնայած դեռևս Կոնֆուցիոսը և Արիստոտելն էին խոսում «սովորել անելով» (learning by doing) գաղափարի կարևորության մասին, իսկ Սոկրատեսն էլ ցույց էր տալիս, թե ինչպես կարելի է սովորել հարցեր տալու, ուսումնասիրության և քննադատական մտածողության միջոցով, այնուամենայնիվ, ընդունված է համարել, որ նախագծային ուսուցման հիմքերը դրել է ամերիկացի կրթության տեսաբան և փիլիսոփա Ջոն Դյուին: Նա իր աշխատություններով խիստ կարևորում էր ուսուցման պրակտիկ մոտեցումները և գտնում, որ ուսուցումը պետք է լինի ակտիվ և սերտորեն կապված սովորողի իրական կյանքի հետ: Նա վիճարկեց սովորողի՝ որպես գիտելիքի պասիվ ընդունողի, և ուսուցչի՝ որպես ստատիկ փաստերի փոխանցողի ավանդական դերերը: Փոխարենը, Դյուին կարևորում էր ակտիվ փորձառությունները, որոնք սովորողներին պատրաստում են շարունակական ուսումնառությանը այս դինամիկ աշխարհում: Ինչպես Դյուին էր նշում, «Կրթությունը կյանքին նախապատրաստություն չէ. կրթությունը կյանքն է»:[3]

Զարգացնելով Դյուիի գաղափարները՝ Ուիլիամ Հ. Քիլպատրիկը իր «Նախագծի մեթոդ» (The Project Method) աշխատության մեջ առաջ քաշեց «նախագիծ» եզրույթը՝ նախագծային ուսուցումը սահմանելով որպես «Սրտանց իրականացվող նպատակային գործունեություն սոցիալական միջավայրում»: Քիլպատրիկի տեսությամբ՝ սովորողները պետք է աշխատեն իրենց հետաքրքրող, ինչպես նաև գիտելիքների ու հմտությունների զարգացմանը նպաստող նախագծերի վրա: [4]

Սկզբնական փուլում՝ 20-րդ դարի սկզբին, նախագծային ուսուցումը հիմնականում կիրառվում էր առանձին փորձերի միջոցով: Այս փուլում սովորողները սովորում էին պրակտիկ առարկաների միջոցով, ինչպիսիք էին, օրինակ, արհեստները: Այնուհետև՝ 20-րդ դարի երկրորդ կեսին, նախագծային ուսուցումը զարգացավ և ընդգրկեց ավելի բարդ նախագծեր: Սովորողները սկսեցին աշխատել խմբերով, ինչը նպաստեց նրանց համագործակցային հմտությունների զարգացմանը: Այս շրջանում նախագծային ուսուցման մեթոդը սկսեց զարգանալ տարբեր կրթական հաստատություններում և շեշտը դրվեց սովորողների հետազոտական աշխատանքի վրա, որը նպաստում էր նոր հմտությունների և գիտելիքների ձեռքբերմանը:

1990-ականներին և 2000-ականների սկզբում նախագծային ուսուցումը նոր զարգացումներ գրանցեց թվային տեխնոլոգիաների և համացանցի շնորհիվ: Կրթական հաստատությունները սկսեցին ավելի լայնորեն կիրառել նախագծային ուսուցումը՝ օգտագործելով ժամանակակից

[3] https://www.edutopia.org/project-based-learning-history
[4] https://hthunboxed.org/uncovering-the-progressive-past-the-origins-of-pbl/

տեխնոլոգիաներ և առցանց ռեսուրսներ: Թվային գործիքները, վիրտուալ հարթակները և առցանց ռեսուրսները մեծապես նպաստեցին նախագծային ուսուցման արդյունավետությանը:

Ի՞նչ է նախագծային ուսուցումը

Մեր օրերում նախագծային ուսուցումը շարունակում է զարգանալ և հարմարվել ժամանակակից կրթական պահանջներին: Ներկայումս նախագծային ուսուցումը տարբեր մասնագետներ /հաստատություններ տարբեր կերպ են սահմանում: Թերևս ամենաընդհանրական և պարզ նկարագրությունը հետևյալն է.

> *Նախագծային ուսուցումն այն ուսուցումն է, որն իրականացվում է սովորողի առաջնորդությամբ՝ ուսուցչի օժանդակությամբ: Սովորողները ձեռք են բերում գիտելիք՝ իրենց բնական հետաքրքրասիրությունից բխող հարցադրումներ անելով: Նախագծի հիմքը հենց հարցադրումն է: Սովորողները մշակում են հետազոտական հարց և հետազոտում այն ուսուցչի օժանդակությամբ: Արդյունքում ստեղծվում է նախագիծ, որը ներկայացվում է ընտրված լսարանին:* [5]

Նախագծերը հիմնվում են գիտական հետազոտությունների վրա, ինչը նպաստում է սովորողների քննադատական մտածողության և հետազոտական հմտությունների զարգացմանը: Նախագծերն ընդգրկում են մի քանի առարկաներ, և ուսուցման պրոցեսը դառնում է ավելի համակցված, խորը և լայն ընդգրկում ունեցող: Կրթական հաստատությունները շեշտը դնում են ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման վրա, որպեսզի նրանք կարողանան արդյունավետ կիրառել նախագծային ուսուցման մեթոդները իրենց դասարաններում, իսկ ուսուցիչներն էլ այժմ ավելի շատ կենտրոնանում են սովորողների մոտիվացիայի և հետաքրքրության վրա՝ օգտագործելով նորարարական մեթոդներ:

Նախագծային ուսուցման առավելությունները

Նախագծային ուսուցման վերաբերյալ ընդունված է ասել, որ այն զարգացնում է «21-րդ դարի հմտություններ», որոնք կարևոր են անձի զարգացման, մասնագիտական հաջողությունների և հասարակական կյանքում ակտիվ մասնակցության համար: Այդ հմտությունների շարքում են թիմով աշխատելը, խնդիրներ լուծելը, հետազոտելը, ժամանակի կառավարումը, տեղեկատվության համադրումը, տեխնոլոգիաների կիրառումը, անձնական և սոցիալական պատասխանատվությունը, որոշումներ կայացնելը, նախագծեր կառավարելը և այլն:

[5] Project-Based Learning for the 21st Century: Skills for the Future, STEPHANIE BELL, https://www.jstor.org/stable/20697896

Նշվածներից բացի կան մի շարք այլ պատճառներ, թե ինչու պետք է նախընտրել նախագծային ուսուցումը: Այսպես՝ նախագծային ուսուցումը.

- Խթանում է սովորողների ներգրավվածությունը, մոտիվացիան և ակտիվ ուսումնառությունը:
- Սովորողներին հնարավորություն է տալիս գործնականում կիրառել տեսական գիտելիքները:
- Հաստատում է միջառարկայական կապեր, ինչն ամրապնդում է գիտելիքները:
- Թիմերով աշխատելու շնորհիվ նախագծային ուսուցումը զարգացնում է սովորողների հաղորդակցական և սոցիալական հմտությունները:
- Սովորողներին տալիս է ավելի մեծ ազատություն և պատասխանատվություն իրենց ուսումնական գործընթացի նկատմամբ:
- Նախագծային ուսուցումը սովորողներին պատրաստում է իրական կյանքի մարտահրավերներին:

Այնուամենայնիվ, նախագծային ուսուցում իրականացնելը մի շարք մարտահրավերներ ունի, որոնց հաղթահարման համար հատկապես ուսուցիչներից մեծ ջանքեր և պատրաստվածություն է պահանջվում:

Նախագծային ուսուցման մարտահրավերները.

- **Դժվար է գնահատել**[6]

Ուսուցման անմիջական արդյունքը հաճախ տեսանելի կամ չափելի չէ: Նախագծի վերջնարդյունքը կարող է լինել «տգեղ» կամ թերի, բայց սովորողը կարող է ձեռք բերել մեծ գիտելիքներ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Ուսուցիչները պետք է ուշադիր հետևեն սովորողներին նախագծի իրականացման ամբողջ ընթացքում, որպեսզի գնահատականն իրականում արտացոլի ուսումնառությունը:

- **Ժամանակատար է**

Նախագծերը երբեմն կարող են շատ ժամանակ պահանջել, որն էլ իր հերթին կարող է խոչընդոտել տվյալ առարկայի բովանդակության յուրացմանը: Ուսուցիչները պետք է հմտորեն կառավարեն ժամանակը, որպեսզի և՛ նախագիծը ավարտին հասցնեն, և՛ կարողանան փոխանցել ծրագրով նախատեսվող ողջ գիտելիքը:

[6] Սա կարևոր խոչընդոտ է, սակայն այս ուղեցույցի շրջանակում այս հարցին անդրադարձ չի կատարվում, քանի որ Ծրագրի շրջանակում վերջնարդյունքը գնահատել է ժյուրին:

- **Ռեսուրսատար է**

Երկար ժամանակից բացի նախագծերը կարող են պահանջել նաև շատ այլ չնախատեսված ռեսուրսներ, ինչպիսին է, օրինակ, ֆինանսական ռեսուրսը: Ռեսուրսների արդյունավետ բաշխումը պլանավորման փուլի կարևորագույն բաղադրիչներից է:

- **Սովորողները կարող են անհամաչափ մասնակցել**

Ինչպես բոլոր խմբային աշխատանքներում, նախագծային աշխատանքում նույնպես հնարավոր է, որ որոշ աշակերտներ «գլուխ պահեն»՝ քողարկվելով ավելի ջանադրաբար աշխատող աշակերտների կատարած աշխատանքով: Այստեղ նույնպես շատ կարևոր է ուսուցչի վերահսկողությունը, որպեսզի նախագծային աշխատանքում բոլոր աշակերտները հավասար մասնակցություն ունենան:

Նախագծերի իրականացման համար կարևոր է հետևել մի շարք հիմնական քայլերի.

- Նախագծային խմբի ձևավորում
- Թեմայի ընտրություն
- Նախագծի պլանավորում
- Նախագծի իրականացում /հետազոտություն
- Վերջնարդյունքի ներկայացում և գնահատում

Նշված քայլերի մանրամասները և Ծրագրի շրջանակում իրականացված քայլերը տե՛ս հաջորդ բաժնում:

Մի քանի խորհուրդ ուսուցիչներին.

- ✓ Շարունակաբար աջակցե՛ք և ուղղորդե՛ք սովորողներին՝ միևնույն ժամանակ խրախուսելով և մոտիվացնելով նրանց:
- ✓ Նորարարություններ ներմուծե՛ք և խրախուսե՛ք ստեղծագործականությունը և նախաձեռնողականությունը:
- ✓ Վստահե՛ք սովորողներին և հիմքեր ստեղծե՛ք ձեզ վստահելու համար:
- ✓ Կառավարե՛ք ժամանակը:
- ✓ Աշխատանքի ընթացքում մշտապես ապահովե՛ք հետադարձ կապը՝ նախագծի շարունակական բարելավման համար:
- ✓ Խրախուսե՛ք, որ սովորողները լինեն հետևողական, բայց միևնույն ժամանակ չվախենան ձախողելուց:

Նախագծային ուսուցումը Հայաստանում

Հայաստանի կրթական համակարգում նախագծային ուսուցումը սկսել է կիրառվել վերջին տարիներին: Ուսումնական նախագծերի իրականացմանը ներկայացվող պահանջը «**Հանրակրթության պետական չափորոշիչ**»-ում սահմանված է «**IX. սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքներ**» բաժնում: Ուսումնական նախագծեր իրականացվում են չափորոշչով սահմանված պահանջներին համապատասխան և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ՀՀ ԿԳՄՍ) նախարարի հրամանով սահմանված կարգով: Հանրակրթության պետական չափորոշչի փորձարկման շրջանակներում 2021-2022 ուսումնական տարում ուսումնական նախագծեր իրականացվել են ՀՀ Տավուշի մարզի դպրոցներում, իսկ 2022-2023 ուսումնական տարում՝ Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցների 7-րդ դասարաններում:

Ուսումնական նախագծերի ոլորտը Հայաստանում կարգավորվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. փետրվարի 18-ի հ. 05–Լ հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգով», որտեղ նախագիծը սահմանվում է որպես *առանձին սովորողների կամ սովորողների փոքր խմբի կողմից որևէ ուսումնական առարկայի կամ ուսումնասիրվող որևէ օբյեկտի կամ երևույթի վերաբերյալ իրականացվող առարկայական կամ միջառարկայական հետազոտական աշխատանք՝ նվիրված օրինաչափությունների, առանձնահատկությունների հետազոտմանը, արդյունքների ստացմանը և եզրակացությունների արձանագրմանը*:[7] Նույն կարգում նշվում է նաև, որ

- Նախագծերն իրականացվում են 7-12 դասարաններում:
- Սովորողի կողմից նախագիծը կարող է իրականացվել ինչպես մեկ ուսումնական առարկայի շրջանակում, այնպես էլ տարբեր ուսումնական առարկաներից՝ հետազոտության մեթոդների համադրմամբ միևնույն օբյեկտի և երևույթի, օրինաչափությունների կամ առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների հավաքման, համադրման, վերլուծության շրջանակում:
- Հաստատությունը ուսումնական պլանի դպրոցական (ընտրովի) բաղադրիչից նախագծի իրականացման համար սահմանված կարգով տրամադրում է համապատասխան ժամաքանակ:
- Նախագծի իրականացման համար տրված ժամաքանակը հաստատության կողմից տարիֆիկացվում է: Միջառարկայական նախագծի դեպքում տարիֆիկացվում են մասնակցող բոլոր առարկաների դասավանդողներին տրվող ժամաքանակները՝ մասնակցության տևողությանը համապատասխան:
- Հաստատության սովորողների կողմից ավարտուն նախագծերը գնահատվում և հրապարակվում են հաստատության կայքում:

[7] https://escs.am/files/files/2023-08-07/761b4bbbe06492bf686501f348982ae2.pdf

Նախագծային ուսուցման հայեցակարգը և ուսուցիչների վերապատրաստման մոդուլը հաստատելու մասին 2024թ. մարտի 11-ի հրամանը (08-Լ) տե՛ս այստեղ. http://bit.ly/3YkLdDc :

3. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ 4.0» ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Նախագծային ուսուցում (այս դեպքում՝ պատմություն առարկայից հետազոտական նախագիծ) իրականացնելու պատճառները կարող են տարբեր լինել, այդ թվում՝

- հանրակրթության պետական չափորոշչի պահանջը,
- ծրագրային որևէ թեմա կամ թեմաների շարք ավելի կիրառական ձևով դասավանդելու նպատակահարմարությունը,
- լրացուցիչ թեմաներ ներմուծելը և ուսումնական գործընթացից դուրս աշակերտներին ներգրավելը՝ նախագիծը որպես մոտիվացիա օգտագործելով,
- ուսուցչի/դպրոցի ներգրավումը լրացուցիչ ծրագրերում, որոնցով ակնկալվում է նախագծի իրականացում (ինչպիսին է «Պատմության մրցույթներ 4.0» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)),
- միջառարկայական կապերի ամրապնդումը և այլն:

Այս բոլոր դեպքերում անհրաժեշտ է, որ ներգրավված անձինք (ծրագրային թիմը և փորձագետները, դպրոցի տնօրինությունն ու ծնողները, ուսուցիչներն ու աշակերտները) հստակ հասկանան նախագծի նպատակն ու նշանակությունը, այն համատեքստը, որում իրականացվելու է նախագիծը: Նման նախագծերի իրականացման վրա ազդում են նաև մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են ընդհանուր ծրագրի ներքին պահանջներն ու պայմանները, ճիշտ հաղորդակցությունը և այլն: Այդ բոլոր գործոնները հաշվի առնելը և դրանց կիրառումը նպաստում է ճիշտ տեղեկացմանը, ակնկալիքների ձևավորմանը, ընդհանրապես նախագծի պլանավորմանը և իրականացմանը:

Սույն Ծրագրի շրջանակում իրականացվող հետազոտական նախագծերը պլանավորելու, իրականացնելու և ներկայացնելու փուլերին նախորդել են մի շարք այլ աշխատանքներ, որոնց վրա էլ կառուցվել են նախագծի այս հիմնական փուլերը, այդ թվում՝

- Ծրագրի իրականացման մասին տեղեկացվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ ծրագրում ներառված ուսուցիչների վերապատրաստման դասընթացի ծրագիրը ներկայացվել է Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ) հիմնադրամի հաստատմանը: Թիրախային մարզերի դպրոցների տնօրենները նույնպես տեղեկացվել են Ծրագրի մասին:
- Ծրագրի նկատմամբ հետաքրքրություն ներկայացրած ուսուցիչների համար կազմակերպվել են առցանց տեղեկատվական հանդիպումներ, որոնց ընթացքում մանրամասն խոսվել է «Պատմության մրցույթներ 3.0» ծրագրի հիմնական գործընթացների և վերջնարդյունքների մասին, նախորդ փուլի մասնակից որոշ

ուսուցիչներ կիսվել են իրենց փորձով, ներկայացվել են ծրագրի ընթացիկ՝ «Պատմության մրցույթներ 4.0» փուլի հիմնական բաղադրիչները։

- Ծրագրում ներգրավվելու մասին որոշում կայացրած ուսուցիչների համար անց է կացվել երկօրյա վերապատրաստման դասընթաց նախագծային ուսուցման, բանավոր պատմության մեթոդաբանության և աղբյուրների հետ աշխատանքի թեմաներով։ Այս դասընթացների ընթացքում կարևորվել է ոչ միայն թեմատիկ նյութը, այլև հմտությունների գործնական կիրառումը, մրցույթի թեմայի պարզաբանումը և տեղայնացման տարբերակների քննարկումը, ինչպես նաև նախագծի հիմնական փուլերի վերաբերյալ քննարկումները՝ շեշտը դնելով պլանավորման և հետազոտական մասի իրականացման վրա։ Դասընթացի նյութերը այս ուղեցույցի գործիքատուփի մաս են կազմում՝ որպես Հավելված 2։
- Մասնակից ուսուցիչներին կցվել են մենթորներ (ծրագրի փորձագետներ, ծրագրային թիմի անդամներ)՝ պլանավորման և հաջորդ փուլերում խորհրդատվություն և այլ աջակցություն տրամադրելու նպատակով։

Ծրագրային թիմի և փորձագետների իրականացրած այս նախապատրաստական աշխատանքներից հետո ***մեկնարկել են բուն հետազոտական նախագծերը՝ մասնակից ուսուցիչների ձևավորած աշակերտական թիմերով***։

Ամփոփելով հարկ է հիշել, որ Ծրագրի նախնական փուլում կարևորվել է պատկան մարմինների տեղեկացումը, բաց և թափանցիկ ձևով մասնակցության պայմանները ներկայացնելը, ճիշտ ակնկալիքներ ձևավորելը և, իհարկե, ծրագրային այն համատեքստի նախանշումը (տեղեկատվական հանդիպման, դասընթացի միջոցով), որում իրականացվելու են հետազոտական նախագծերը։

Նախագծերի պլանավորման, իրականացման և ներկայացման հիմնական փուլերը՝ կարևոր քայլերով և առանձնահատկություններով, մանրամասն ներկայացված են գործնական ուղեցույցի հաջորդ՝ 4-6 բաժիններում։

Յուրաքանչյուր բաժին ունի հետևյալ կառուցվածքը.

- ներածական մաս,
- հիմնական քայլեր,
- մեջբերումներ մասնակից ուսուցիչների փորձից կամ գործնականում կիրառելի ձևաթղթեր,
- ամփոփում և խորհուրդներ ուսուցիչներին։

Ներածական մասում, ինչպես նաև ամփոփումներում /խորհուրդներում ներկայացվում են թե՛ նախագծային ուսուցման լավագույն միջազգային փորձից բխող գործողություններ, թե՛ կոնկրետ այս ծրագրում դրանց դրսևորումները։

4. ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ինչու՞ և ինչպե՞ս պլանավորել

Հետազոտական նախագծի, ինչպես և ցանկացած այլ նախագծի հաջող ընթացքի համար առանցքային նշանակություն ունի պլանավորման փուլը: Այս փուլում է կազմավորվում նախագծի թիմը, ընտրվում նախագծի թեման, սահմանվում են խնդիրները, մշակվում է ժամանակացույցը, բաշխվում են առաջադրանքները, ինչպես նաև կատարվում է անհրաժեշտ ռեսուրսների նախնական գնահատում՝ այսպիսով դնելով նախագծի հետագա իրականացման հիմքը:

Նախագիծ իրականացնող ուսուցիչները պետք է հստակ պատկերացնեն, թե ինչպես տվյալ թեմայի շուրջ նախագիծ իրականացնելը կհարստացնի աշակերտների գիտելիքները և հմտությունները, ինչպես կարելի է հետաքրքրել նրանց ու ներգրավել նախագծում: Ուսուցիչները պետք է գնահատեն նախագիծն իրականացնելու համար պահանջվող հմտությունները, ժամանակը, ռեսուրսները, ուսուցչի և թիմի լրացուցիչ ծանրաբեռնվածությունը: Նրանք պետք է նախապես հետազոտեն ընդհանուր թեման, լավ պատկերացնեն, թե ինչ հասկացությունների, իրողությունների, պատմական փաստերի, աղբյուրների հետ պետք է աշխատեն աշակերտները: Շատ կարևոր է նաև, որ ուսուցիչները ստանան դպրոցի տնօրինության, գործընկերների, ծնողների հավանությունն ու աջակցությունը:

Սա ենթադրում է ուսուցչի նախապատրաստական աշխատանք, որը հիմնականում ուսուցիչը կատարում է ինքնուրույն: Սակայն մեր Ծրագրի մասնակից ուսուցիչներն աջակցություն ստացան. նրանց համար կազմակերպվեց դասընթաց, տրամադրվեց մենթորություն՝ հետազոտական պլանների մշակման և այլ աշխատանքներում:

Հետազոտական նախագծի պլանավորման հիմնական քայլերը «Պատմության մրցույթներ 4.0» ծրագրի օրինակով[8]

1. Նախագծի մասին տեղեկացում դպրոցի ղեկավարությանը, գործընկեր ուսուցիչներին և, ինչ-որ փուլում՝ նաև թիմում ներգրավված աշակերտների ծնողներին
2. ***Նախագծի մասին հայտարարություն և թիմի ընտրություն***
3. ***Հետազոտական նախագծի թեմայի որոշում***
4. ***Հետազոտական նախագծի պլանի կազմում՝ որպես նախագծի հետագա իրականացման ուղենիշ***
5. Մենթորների արձագանք հետազոտական պլանին և, անհրաժեշտության դեպքում, դրա վերանայում

[8] Վանդակում նշված են հետազոտական նախագծի պլանավորման հինգ հիմնական փուլերը՝ ըստ «Պատմության մրցույթներ 4.0» ծրագրի, որոնցից 2-4 քայլերը այս բաժնում ներկայացված են առավել մանրամասն:

Նախագծի մասին հայտարարություն և թիմի ընտրություն

Նախագծի հաջողությունը մեծապես կախված է նաև նրանից, թե որքանով են ճիշտ ընտրված նախագծային թիմի անդամները: Կարևոր է հաշվի առնել թիմի անդամների հմտությունները և կարողությունները, համագործակցային աշխատանքի փորձը, հետազոտական թեմայի վերաբերյալ նախնական պատկերացումները, ոգևորությունը և այլ գործոններ:

Ծրագրով նախատեսված «**Պրոպագանդան որպես խորհրդային գաղափարախոսության գործիք Հայաստանի հանրային տարածքում, կենցաղում, մշակույթի և կրթության մեջ»** ընդհանուր թեմայի ընտրությունն արդեն իսկ որոշակի հուշումներ էր պարունակում նախագծի իրականացման պայմանների, այդ թվում՝ թիմի ձևավորման և նախագծի թեմայի տեղայնացման տեսանկյունից:

Կարևոր է:
Թիմի ընտրության այստեղ ներկայացվող առանձնահատկությունները վերաբերում են կոնկրետ այս Ծրագրին, ընդհանուր ազգային թեմայի առկայությանը և դրանից բխող գործոններին: Ամեն առանձին դեպք տարբեր է և պետք է այն դիտարկել կոնկրետ համատեքստում, սահմանել պահանջներն ու պայմանները: Այդուհանդերձ, այս բաժնում ներառված ուղղորդումներից շատերը կիրառելի են նախագծային ուսուցման բոլոր դեպքերում:

Այսպիսով, թեման հուշում է, որ աշակերտները պետք է պատկերացում ունենան ԽՍՀՄ պատմության մասին, ինչից ելնելով՝ թիմում կարող են ներառվել 9-12-րդ դասարանի աշակերտներ: Այդուհանդերձ, ուսուցիչները բախվում են այն հանգամանքին, որ 9-րդ և 12-րդ դասարանները ավարտական են, և հատկապես 12-րդ դասարանում սովորող աշակերտները շատ ծանրաբեռնված են: Հիմնական դպրոցում էլ թիմը սահմանափակվում է միայն 9-րդ դասարանում սովորողներով, և հարց է ծագում՝ արդյո՞ք ուսուցիչը կարող է ներգրավել, օրինակ, 8-րդ դասարանի աշակերտների:

Ուսուցիչը պետք է պատասխանի ևս մի շարք կարևոր հարցերի, որպեսզի կարողանա ընտրության հստակ չափանիշներ սահմանել, ինչպիսիք են.

- Որո՞նք են նախագծի օգուտները աշակերտների տեսանկյունից, և ինչպե՞ս ներկայացնել դրանց գրավչությունը (օրինակ՝ նոր հմտություն /գիտելիք, իրական կյանքի /մարդկանց հետ շփումներ, ինչ-որ մի բան ինքնուրույն ստեղծելու գայթակղություն և այլն):
- Քանի՞ անդամ պետք է ունենա թիմը, որպեսզի աշխատանքները արդյունավետ կազմակերպվեն, բայց նաև փոխլրացնող հմտություններ առկա լինեն:
- Արդյո՞ք նախագծով ոգևորված լինելու հանգամանքը դիտարկել որպես կարևոր գործոն, թե՞ փորձել ներգրավել նաև, այսպես ասած, «լուռ», ոչ ակտիվ աշակերտների:
- Ինչպե՞ս ապահովել աշակերտ-աշակերտ արդյունավետ փոխգործունեությունը, բայց նաև ճիշտ կազմակերպել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները նախագծի

շրջանակում: Այդ տեսանկյունից, կարո՞ղ են, օրինակ, թիմի արդեն իսկ ընտրված անդամները այլ անդամներ առաջարկել, թե՞ վերջնական որոշումը ուսուցչինն է:
- Այլ հարցեր՝ ելնելով կոնկրետ իրավիճակից:

Երբ քիչ թե շատ հստակ պատկերացում կա այս բոլոր հարցերի մասին, ***անհրաժեշտ է ձևակերպել ընտրության չափանիշները և հայտարարել նախագծի մասին***: Դա կարելի է անել համապատասխան դասարաններում հանդիպումներ կազմակերպելով, գործընկեր ուսուցիչների կամ աշակերտական խորհրդի ներուժն օգտագործելով: Կարելի է նաև օգտագործել սոցիալական մեդիայի հնարավորությունները՝ ֆեյսբուքյան կամ այլ հարթակներում գրառում կատարելով: Իհարկե, հնարավորության դեպքում պետք է օգտագործել այս բոլոր գործիքների համադրությունը:
Նախքան վերջնաժամկետը արձագանքներ կամ դիմումներ ստանալուց հետո՝ բոլոր հետաքրքրված աշակերտներին անհրաժեշտ է հավաքել նույն վայրում, ևս մեկ անգամ ներկայացնել նախագծի մանրամասները և ընտրության չափանիշները: Արդյունքում, իրենց ուժերը և ժամանակը գնահատելով, որոշ աշակերտներ գուցե հրաժարվեն նախագծում հետագա մասնակցությունից: Մյուս հավակնորդներից արդեն ուսուցիչն ինքը պետք է ընտրություն կատարի՝ հետևելով չափանիշներին: Այսպես, օրինակ՝
- եթե նախապես որոշել եք թիմի անդամների առավելագույն թիվը, ներգրավե՛ք միայն որոշված թվով մասնակից,
- եթե ներկայացված առաջնային չափանինշներն են ընդհանուր թեմայի իմացությունը, տարբեր հմտությունների առկայությունը և ոգևորությունը, առաջնորդվե՛ք դրանցով,
- եթե սրանից հետո էլ ցանկացողներն ավելի շատ են, գտե՛ք թափանցիկ ընտրության այլ եղանակներ՝ վիճակահանությունից մինչև պարզ հանձնարարություն տալը:

Կարևոր է:
Որքան մեծ է թիմը, այնքան խմբային դինամիկան ավելի բարդ է լինում, իսկ շատ փոքր թիմը բավարար չէ տարբեր առաջադրանքներ իրականացնելու համար: Թիմի անդամների օպտիմալ թիվը 5-7 է: Ամեն դեպքում, վերջնական որոշում կայացնողը ուսուցիչն է:

Նախագիծ մասին տեղեկացումը և թիմերի ընտրությունը գործնականում.

Ծրագրի մասնակից ուսուցիչների փորձը

«Հայտարարությունը արել եմ երկու 10-րդ և երկու 11-րդ դասարաններում: Հաշվի եմ առել, որ մասնակիցները պետք է գաղափար ունենան ԽՍՀՄ-ի մասին, ծանոթ լինեն թեմային, որոշակի ներուժ ունենան, նման ծրագր(եր)ի մասնակցած լինեն: Կարևոր է նաև, որ տեսակով լինեն հետաքրքրասեր, պրպտող, կազմակերպ(վ)ող, համակարգող: Կարող էի հայտարարել նաև 9-րդ դասարանում, ուղղակի արդեն գիտեմ, որ այդ դասարանը քննական է, և երեխաները ավելի շատ զբաղված են քննություններին պատրաստվելով»:

«Հետազոտական նախագծի մասնակիցների խումբը ձևավորվեց ուսուցիչ-աշակերտ համատեղ քննարկման արդյունքում: Իմ կողմից ընտրությունը կատարվել է՝ հաշվի

առնելով սովորողների ընդհանուր զարգացածությունը, մեծ թեմաների հետ աշխատելու, վերլուծելու կարողությունն ու պատրաստակամությունը, այս [ԽՍՀՄ] շրջանի պատմության իմացությունը, լեզվական, հաղորդակցության հմտությունները, տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտությունները, ակտիվությունը: Կարևոր է նաև խմբում աշխատելու, պատասխանատվության զգացումը, ստեղծագործականությունը»:
«Հանրակրթության պետական նոր չափորոշչով 2023-2024 ուստարում նախագծային ուսուցումը համարվում է պարտադիր 7-րդ դասարանի համար: 9-րդ դասարանի աշակերտները հաճախ էին հարցնում, թե իրենք ե՞րբ են կատարելու նախագծային աշխատանք: Ի սկզբանե հետազոտական նախագիծ կատարելու ցանկություն հայտնեցին շատ աշակերտներ, բայց ստիպված եղան հետո հրաժարվել՝ դասերով և զանազան պարապմունքներով, ինչպես նաև նախաքննական գործընթացով ծանրաբեռնված լինելու պատճառով: Աշակերտների հետաքրքրության և ոգևորության հիմքում ընկած էր նախկինում հետազոտական նախագիծ իրականացնելու փորձը տարբեր առարկաներից, ինչպես նաև թարմ մոտիվացիա էր հասարակագիտություն առարկայից «Քաղաքացի նախագծի» իրականացումը»:
«Խումբը ձևավորվել է 9-10-րդ դասարանցիների մասնակցությամբ՝ համապատասխանաբար 5 և 2 հոգի: Սկզբում աշակերտներին տեղեկացրել եմ, որ կա պատմության նախագիծ, որ ես շատ եմ ուզում կատարենք, բայց պետք է հանդիպենք և մանրամասն քննարկենք: Այդքան էլ խանդավառությամբ չընդունեցին, որովհետև՝ նախ դասերից հետո մնալու խնդիր կար, հետո էլ լավ պատկերացում չունեին կատարվելիքի մասին: Դասերից հետո հանդիպեցինք և, ինչքան հնարավոր եղավ, տեղեկացրի նյութի մասին, պատմեցի նաև անցյալ տարվա կատարված նախագծերի մասին, ասացի, որ հնարավոր են նաև հանդիպումներ իրենց հասակակիցների հետ: Նաև հավաստիացրել եմ, որ ամեն հարցում ստանալու են իմ աջակցությունը»:

Հետազոտական նախագծի թեմայի որոշումը[9]

Հաջորդ կարևոր քայլը թիմի հետ միասին նախագծի թեմայի ընտրությունն է: Թեման կարող է ընտրել ուսուցիչը՝ ուսումնական ծրագրի շրջանակում կամ դրանից դուրս: «Պատմության մրցույթներ 4.0» ծրագրում, սակայն, տրվել էր Հայաստանի համար ընդհանուր թեմա, որի շրջանակում թիմերը պետք է ընտրեին իրենց ենթաթեմաները:

Այստեղ ևս ուսուցիչը պետք է մի քանի ուղղությամբ աշխատի, այդ թվում՝

- Եթե տեսնում եք դրա անհրաժեշտությունը, մինչև թեման ընտրելը և հետազոտության մեկնարկը մեկ կամ մի քանի հանդիպում ունեցե՛ք աշակերտների հետ պատմության այն հատվածի վերաբերյալ, որը հետազոտության առարկան է լինելու (այս դեպքում՝

[9] Ծրագրի շրջանակում թիմերը պետք է ենթաթեմա ընտրեին նախապես հայտարարված ընդհանուր ազգային թեմայի շրջանակում, որն էր «**Պրոպագանդան որպես Խորհրդային գաղափարախոսության գործիք Հայաստանի հանրային տարածքում, կենցաղում, մշակույթի և կրթության մեջ»:**

Խորհրդային շրջանի պատմությունը)։ Հնարավոր է, որ աշակերտները լավ չհիշեն նյութը և թարմացման կարիք ունենան։

- Խնդրե՛ք աշակերտներին, որ իրենք էլ իրենց հերթին որոշակի նախնական նյութ հավաքեն, պատրաստ լինեն քննարկելու և փոխհամաձայնության գալու թեմայի շուրջ։
- Կիրառե՛ք տարբեր մոտեցումներ նման քննարկում կազմակերպելու համար՝ մտագրոհից մինչև բանավեճ, և հնարավորինս արձանագրե՛ք արդյունքը։
- Երբ թեման որոշվել է, հավաստիացե՛ք, որ այն իրագործելի է՝ կիրառելով համապատասխան ստուգաթերթիկը, որը ներառված է գործիքատուփում որպես Հավելված 3 (էջ 8)։
- Կարող եք նաև թեմայի վավերությունը քննարկել գործընկեր ուսուցիչների կամ այդ հարցի գիտակ այլ մասնագետների հետ։
- Այս փուլում շատ կարևոր է նաև, որ թիմը քննարկի այն հարցը, թե ինչ վերջնարդյունք է ներկայացնելու՝ հաշվի առնելով, որ ընտրված թեման անհրաժեշտ է ներկայացնել իրենց գերադասած ձևաչափով։

Կարևոր է։
Թեմայի ընտրությունից է սկսվում աշակերտների հարցադրումների ձևակերպումը, որը պետք է շարունակական լինի բոլոր հետագա փուլերում՝ խթանելով հետաքրքրությունը, քննադատական հայացքը, վերլուծական մոտեցումը։ Հարցերը պետք է լինեն շատ իրատեսական, այնպիսին, որոնց աշակերտը կուզենա պատասխանել իրական կյանքում։

Որպես այս գործնական ուղեցույցի օժանդակ նյութ՝ գործիքատուփում ներառված է նաև **Պատմության մրցույթներում հետազոտական նախագծերի իրականացման ուղեցույցը (Հավելված 3)**, որն օգտակար հուշումներ է պարունակում թեմայի քննարկման մեթոդների, թեմայի ստուգաթերթիկի, ձևաչափերի և այլ հարակից հարցերի մասին։

Նախագծի թեմայի ընտրությունը գործնականում.

Ծրագրի մասնակից ուսուցիչների փորձը

«Թեմայի ընտրության համար ընդհանուր առմամբ ունեցել ենք 4 հանդիպում յուրաքանչյուր խմբի հետ։ Առաջին հանդիպման ժամանակ ներկայացրել եմ ընդհանուր թեման, դրա յուրահատկությունները և դրսևորումները։ Ներկայացրել եմ նաև, որ պետք է ընտրենք հետազոտության մեր ենթաթեման։ Քննարկման ընթացքում ներկայացրել եմ հնարավոր թեմաներ, որպեսզի աշակերտները պատկերացում կազմեն թեմայի մասին, խնդրել եմ, որ իրենք էլ մտածեն, թե ինչ թեմաներ կարող ենք ընտրել։
Հետազոտության թեման ընտրելու քննարկումների ընթացքում հասկացա, որ նախ պետք է մի դասընթաց անեմ հենց «պրոպագանդա» հասկացության մասին՝ երկու խմբերի համար։ Հետո հասկացա նաև, որ աշակերտները շատ տեղեկություններ ունեն, որոնք ձեռք են բերել մեծերի հետ զրուցելիս, նրանց խոսակցությունները լսելիս։ Այսինքն՝ ես խնդիր եմ դրել նաև այդ ինֆորմացիան դասակարգելու»։

«Առաջին հանդիպման ընթացքում կրկին անդրադարձանք այն հարցին, թե ի՞նչ է հետազոտական և նախագծային աշխատանքը, դրանց նպատակներին ու անհրաժեշտությանը, թե ինչքան կարևոր է այսօր 21-րդ դարի հմտություններին տիրապետելը՝ բացի ակադեմիական գիտելիքների յուրացումից, դրանց կիրառումը: Ինչո՞ւ է կարևոր ցանկացած գիտելիք վերլուծելը, քննադատական մտածողությունը, ստեղծագործական մտածողությունը և այլն: Հետազոտական նախագծի թեմայի և խնդրի ընտրությունն իրականացրել ենք «Սոկրատեսյան զրույց» մեթոդի օգնությամբ: Քննարկման առաջին բաց հարցը հետևյալն էր. «Ինչո՞ւ է այս հիմնախնդիրն արդիական ու կարևոր»: Այնուհետև հետևում են այլ բնույթի հարցեր, որոնք պարզաբանվում են, անդրադառնում ենք փաստերին ու վկայություններին՝ «Ի՞նչ եք կարծում, մարդիկ Հայաստանում հիմա՞ են լավ ապրում, թե՞ ԽՍՀՄ տարիներին», «Ո՞րն է, ըստ ձեզ, լավ ապրելու չափանիշը», «Ինչո՞ւ շատերը կարոտով են հիշում «սովետմիության» տարիները»:

«Հետազոտական նախագծի թեմայի ընտրության շուրջ ունեցել ենք երկու հանդիպում: Առաջին հանդիպման ժամանակ տեղի ունեցավ տեղեկատվական զրույց-քննարկում, որի ընթացքում աշակերտներին ներկայացրեցի թեման, մտագրոհի միջոցով քննարկեցինք, թե ի՞նչ է պրոպագանդան, ներկայացրեցինք պրոպագանդայի դրսևորումները տարբեր բնագավառներում և մարդկանց առօրյայում, պատկերացում կազմվեց աշակերտների մինչ այդ ունեցած գիտելիքների մասին: Այնուհետև աշակերտներին հանձնարարել եմ մտածել և ընտրել թեմա, որը կբխի հայաստանյան ընդհանուր թեմայից և հոգեհարազատ կլինի մեր միջավայրի և տարածաշրջանի համար:
Երկրորդ հանդիպման ժամանակ կազմակերպեցինք հետազոտական նախագծի թեմայի քննարկում և ընտրություն: Ընտրությունը կատարվեց քվեարկության միջոցով: Գունավոր կպչուն թղթիկների վրա թիմի յուրաքանչյուր անդամ գրեց իր նախընտրած թեման և փակցրեց գրատախտակին: Ընտրությունը կատարվեց կպչուն սմայլիկների միջոցով, չորս՝ առավելագույն թվով սմայլիկ հավաքեց «Պրոպագանդան որպես խորհրդային գաղափարախոսության գործիք հանքարդյունաբերության ոլորտում» վերնագրով թեման»:

«…աշակերտները որոշեցին ընտրել հեշտ տարբերակը, ընտրեցին «Պատերազմական իդեալների պրոպագանդան Խորհրդային Հայաստանում հուշարձանների օրինակով Նոյեմբերյանի տարածաշրջանի Դովեղ, Ջուջևան, Կողբ, Բերդավան գյուղերում և շրջկենտրոն Նոյեմբերյանում» վերնագրով տարբերակը: Աշակերտներից մեկը պատճառաբանեց, որ հուշարձանները հիմա էլ կան, շոշափելի են, կառուցվել են ոչ վաղ անցյալում, հեշտ կլինի տեղեկություն հավաքել և հարցազրույցներ վարել:
Մյուս տարբերակներից էր «Անձնանունները որպես խորհրդային քարոզչության ձև» թեման, որը չընդունվեց, քանի որ մեր գյուղում նմանատիպ անուններ ունեցող մարդիկ համարյա չկան: Երրորդ տարբերակը «Պրոպագանդան խորհրդային կրթության մեջ» վերնագրով նյութն էր: Որքան հնարավոր էր, տեղեկություն տվեցի դպրոցական այն կազմակերպությունների մասին, որոնք այն տարիներին դպրոցներում կային՝ «հոկտեմբերիկ», «պիոներ», «կոմերիտական»: Աշակերտները գտան, որ ծավալուն նյութ է, լրացուցիչ աշխատանք շատ կպահանջվի: Չորրորդ վերնագիրը՝ «Աշակերտական հագուստը որպես պրապագանդայի միջոց խորհրդային դպրոցում» ևս չընդունվեց: Պատճառաբանեցին, որ անհետաքրքիր է»:

Հետազոտական նախագծի պլանը որպես նախագծի հետագա իրականացման ուղենիշ

Նախագծի մասին տեղեկացումից, թիմի ձևավորումից ու թեմայի ընտրությունից հետո էլ պլանավորման գործընթացը դեռ ավարտված չի համարվում: Այն ամբողջականանում է միայն հետազոտության պլանում ներառված մի քանի կարևոր բաղադրիչների անդրադառնալուց և պլանը վերջնականացնելուց հետո: «Պատմության մրցույթներ 4.0» ծրագրի շրջանակներում մշակվել և ուսուցիչներին է տրամադրվել հետազոտական պլանի օրինակելի ձևաթուղթ, որը ներկայացված է ստորև: Օրինակելի ձևաթուղթը կիրառելի է ցանկացած այլ հետազոտական նախագիծ իրականացնելու համար:

Հետազոտության ամփոփ նախագիծ[10]	
Հետազոտության թեման Գրե՛ք թեման կամ վերնագիրը	Յուրաքանչյուր նախագծի համար ընտրվում է 1 ենթաթեմա՝ արդեն իսկ հաստատված ընդհանուր թեմայի շրջանակներում: Թեմայի ընտրությունը **կատարվում է աշակերտական խմբի հետ միասին**՝ մտագրոհի և դրան հետևող թեմայի փորձարկման կամ քննարկման այլ մեթոդների կիրառմամբ:
Հետազոտության խնդիրը (20-40 բառի սահմաններում):	Ներկայացրե՛ք, թե ի՞նչ հետազոտական խնդիր եք լուծելու, ինչո՞ւ է դա կարևոր, ի՞նչ կիմանան աշակերտներն այդ հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում:
Հետազոտական հարցեր (առավելագույնը 100 բառի սահմաններում):	Հետազոտական խնդրից ելնելով՝ ի՞նչ հետազոտական հարցերի եք պատրաստվում անդրադառնալ (ներկայացրե՛ք հարցերի ձևով, օրինակ՝ ինչպիսի՞ պրոպագանդիստական նշանակություն ունեին փողոցների անվանումները, ինչպե՞ս էր դպրոցական հագուստը նպաստում խորհրդային պրոպագանդային, այլ…)

[10] Որպես այս գործնական ուղեցույցի օժանդակ նյութ՝ գործիքատուփում ներառված են Ծրագրի մասնակից ուսուցիչների կողմից ներկայացված մի քանի հաջողված հետազոտական պլաններ որպես Հավելված 4:

Հետազոտության մեթոդաբանություն (100-200 բառի սահմաններում):	Նկարագրե՛ք, թե ինչպե՞ս եք ուսումնասիրելու թեման, որ կարողանաք պատասխանել հետազոտական հարցերին, ինչպիսի՞ տեղեկություններ եք հավաքելու, ինչո՞վ եք հիմնավորում այդ մեթոդի ընտրությունը: Ինչպե՞ս եք գրանցելու տվյալները: Ինչպե՞ս եք վերլուծելու արդյունքները: ***Հիշեցում.*** Հարկ է օգտվել **առնվազն երեք տեսակ աղբյուրից**, օրինակ՝ արխիվ, հարցազրույց, գրականություն, այլ: Վերլուծությունը պետք է **բազմակողմանիորեն ներկայացնի հետազոտական խնդիրը,** և վերլուծության արդյունքների հիման վրա պետք է եզրակացություններ կատարվեն:
Հետազոտության ժամանակացույց (80-100 բառի սահմաններում):	Ներկայացրե՛ք, թե ինչ փուլերով եք կազմակերպելու հետազոտությունը և յուրաքանչյուր փուլի համար ինչ ժամկետներ եք նախատեսում: Օրինակ՝ ***Փուլ 1. Նախապատրաստական*** 1.1. Աշակերտական խմբի ձևավորում /հունվար 2024/ ***Փուլ 2. Նախագծի իրականացում*** ***Փուլ 3. Նախագծի վերջնարդյունքի ստեղծում և ներկայացում*** Բոլոր փուլերի համար անհրաժեշտ է նշել առանձին գործողությունները:
Հետազոտության հնարավոր ռիսկերը (առավելագույնը 80 բառի սահմաններում):	Փորձե՛ք պատկերացնել և ներկայացնել, թե հետազոտության իրականացման համար ինչ դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են լինել, և ինչպես եք պատրաստվում հաղթահարել դրանք:
Անհրաժեշտ ռեսուրսներ	Հետազոտական պլանը կազմելիս մտածե՛ք, թե ինչ ռեսուրսների կարիք կունենաք, և ներառե՛ք դրանք՝ նշելով, թե ինչպես կարելի է ձեռք բերել այդ ռեսուրսները:
Նախագծի արդյունքների ներկայացում	Նախագծի արդյունքները ո՞ւմ կարող են հետաքրքրել: Ձեր խմբի հետ քննարկե՛ք և ներկայացրե՛ք, թե համայնքում, դպրոցում ո՞ր խմբերին եք ցանկանում ներկայացնել հետազոտված թեմայի արդյունքները:

Աշակերտական խմբի հետ աշխատանք (80-100 բառի սահմաններում):	Ինչպե՞ս եք համակարգելու աշակերտական խմբի աշխատանքները / դերաբաշխում, առաջադրանքների բաշխում, հանդիպումների հաճախականություն, այլ/:

Կարևոր է:
Ճիշտ ձևակերպված հետազոտական խնդիրը նախագծային ուսուցման առանցքն է, որն ապահովում է սովորողների ներգրավվածությունը և շահագրգռվածությունը:
Հետազոտական հարցը պետք է ձևակերպվի այնպես, որ այն «իրական կյանքում» առաջացող հարցի նմանվի, իսկ պատասխանը չպետք է շատ պարզ լինի, որպեսզի հնարավոր լինի մարզել սովորողների միտքը, խթանել երևակայությունը:

Ծրագրի շրջանակներում ուսուցիչների և աշակերտական թիմերի մշակած հետազոտական պլաններն այնուհետև վերանայվել են ուսուցիչներին կցված մենթորների կողմից, արվել են դիտարկումներ և առաջարկներ բարելավման համար: ***Հիմնականում առաջարկվել է ավելի լավ ձևակերպել հետազոտության խնդիրը և հարցերը, նեղացնել հետազոտության շրջանակը, որպեսզի այն իրագործելի լինի***: Հետազոտական պլանների վերանայումից և մենթորների հաստատումից հետո միայն թիմերը սկսել են բուն նախագծային հետազոտական աշխատանքը:

Կարևոր է հիշել՝
- Պլանավորումը իրականացման հիմքն է. առանց պլանավորման հիմնական քայլերի՝ հնարավոր չէ նախագծի հաջող իրականացումը:
- Թիմի ընտրությունը պետք է կատարվի հստակ չափանիշներով և թափանցիկ գործընթացով: Թիմում պետք է համադրել տարբեր հմտություններ և կարողություններ:
- Թեմայի ընտրության փուլում ուսուցիչը պետք է աշակերտներին մեկ անգամ ևս ներկայացնի պատմական այն ժամանակաշրջանը, որը հետազոտության առարկան է, բացատրի առանցքային հասկացությունները, եզրերը:
- Թեմայի ընտրությունը պետք է իրականացվի որոշակի մեթոդների և գործիքների կիրառմամբ, արձանագրվի, որից հետո պետք է ստուգվի թեմայի վավերականությունը:

5. ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նախագծային ուսուցման իրականացման փուլի մասին ընդհանուր գծերով

Երբ արդեն ձևավորվել է նախագիծն իրականացնող թիմը, հստակեցվել է թեման, պարզ են հետազոտական նախագծի նպատակն ու խնդիրները, ձևակերպվել են հարցերը

(«Պատմության մրցույթներ 4.0» ծրագրի դեպքում այս ամենը ներառված է հետազոտական նախագծի պլանում), ***կարելի է սկսել նախագծի իրականացումը***։

Այս փուլը շատ ակտիվ է, հետաքրքիր և ոգևորող, բայց նաև ունի իր մի շարք դժվարությունները. ***այն ուսուցիչներից պահանջում է և՛ համակարգում, և՛ աջակից ուղղորդում, բայց նաև աշակերտների ինքնուրույն աշխատանքի առավելագույն խրախուսում***։

Իրականացման փուլում է, որ աշակերտները հետազոտում և բացահայտում են, տրամաբանում և պլանավորում, գտնում են պատասխաններ ու լուծումներ։ Այդուհանդերձ, այս փուլում հնարավոր են նաև հիասթափություններ, հոգնածություն, պլանից շեղում, համակարգման և համագործակցության դժվարություններ, թեմայի ավելի խորքային ընկալումից դեպի վերլուծություն և ներկայացում անցնելու հետ կապված մարտահրավերներ։

Ահա թե ինչու կարևոր է, որ ուսուցիչը որոշակի քայլեր ձեռնարկի նախագիծը հաջողությամբ ավարտին հասցնելու համար, այն է՝

Նմանատիպ օրինակի ներկայացում և քննարկում	Սկսե՛ք հաջողված նախագծի որևէ օրինակ(ներ) քննարկելով, անդրադարձե՛ք այն հարցին, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է ընտրված հաջողված նախագիծը նման ձեր նախագծին, ի՞նչը կուզեիք այլ կերպ անել, ինչո՞ւ։ Այս քննարկումն անհրաժեշտ է այնպես ուղղորդել, որ պարզ լինի կրկնօրինակելու անընդունելի լինելը։
Վերջնարդյունքի /աշխատանքի հանրային ներկայացման կարևորում	Հնարավորինս պատկերացում ունեցե՛ք, թե ինչպիսին պետք է լինի նախագծի վերջնարդյունքը։ Կարևորե՛ք այն հանգամանքը, որ վերջնարդյունքը հանրայնորեն ներկայացվելու է։ Սա մի կողմից ոգևորում է աշակերտներին, իսկ մյուս կողմից՝ բարձրացնում նրանց պատասխանատվությունը։
Աշխատանքային գործընթացի քննարկում և շտկումներ	Պարբերաբար աշխատանքային հանդիպումներ ունեցեք՝ պարզելու նախագծի իրականացման ընթացքը և խնդիրները։ Թիմի յուրաքանչյուր անդամ պետք է հաշվետու լինի իր հանձնարարությունների կատարման համար։ Միաժամանակ թիմն ամբողջությամբ պետք է պատկերացում ունենա առաջընթացի և հնարավոր շտկումների մասին։
Նախնական տարբերակների քննարկում և հետադարձ կապ	Լավ կլինի ունենալ վերջնարդյունքի մի քանի նախնական, սևագիր տարբերակ, որոնք կքննարկվեն և կբարելավվեն արված մեկնաբանությունների և դիտողությունների հիման վրա։ Թե՛ ուսուցիչը, թե՛ աշակերտները պետք է ակտիվ ներգրավվեն քննարկման և հետադարձ կապի գործընթացում։ Կարևոր է քննադատական դիտարկումներ կատարելիս լինել զգույշ և զգայուն, բայց նաև կոնկրետ և օգտակար առաջարկներ ներկայացնել։

Վերջնարդյունք	Վերջնարդյունքը ավարտին հասցնելու համար հարկ է համաձայնության գալ այն բանի շուրջ, թե ստացված նյութերից ո՞ր մասն անպայմանորեն պետք է ներառվի, իսկ որը կարող է մի կողմ դրվել: Դրանից հետո պետք է որոշել վերջնարդյունքի կառուցվածքը, տրամաբանությունը, հետազոտական մասի ներառումը, վիզուալ և ձայնային էֆեկտները և այլն:

Կարևոր է հիշել:

- Որքան իրական է աշակերտների առջև դրված խնդիրը, այնքան ավելի մեծ է նրանց ոգևորությունը և ներգրավվածությունը:
- Ուսուցիչը պետք է ոչ միայն համակարգի, աջակցի և ուղղորդի, խորհուրդներ տա և դիտարկումներ կատարի, այլև որևէ ձևով ինքն էլ ***ուղղակիորեն ներգրավվի*** նախագծի իրականացմանը:
- Պլանավորումից շեղումները անխուսափելի են: Պարզապես շտկումներ արե՛ք և առա՛ջ շարժվեք:

Հետազոտական նախագծի իրականացումը «Պատմության մրցույթներ 4.0» ծրագրում

Հետազոտական նախագծերի իրականացման 4 փուլերը հիմնականում համընկնում էին վերևում քննարկված կետերի հետ, բայց դրանք ունեին իրենց կոնկրետ դրսևորումը:

Վերջնարդյունքի տարբեր ձևաչափերի ներկայացում	Հաշվի առնելով վերջնարդյունքի կարևորությունը իրականացման փուլում՝ բոլոր մասնակից թիմերի համար կազմակերպիչները անցկացրեցին առցանց հանդիպում՝ ներկայացնելով այնպիսի ձևաչափեր, ինչպիսիք են էսսեն/շարադրությունը, տեսաֆիլմերը, փոդքասթը, պաստառները և այլն: Սահիկաշարը ներառված է գործիքատուփում որպես Հավելված 5:
Տվյալների հավաքում	Հետևելով առնվազն երեք տեսակի աղբյուրից[11] տվյալներ հավաքելու պահանջին՝ նախագծային թիմերը սկսեցին հարցազրույցները, առաջնային և երկրորդային աղբյուրների ուսումնասիրությունը, ընտանեկան և այլ արխիվներից լուսանկարների հավաքումը և ուսումնասիրությունը, այցելությունները հուշարձաններ, թանգարաններ, արխիվներ, գրադարաններ և այլն: Այս փուլի որոշ մանրամասներ ներկացված

[11] Կարևոր է շեշտելը, որ աշակերտներն աշխատեն առնվազն երեք տեսակի աղբյուրի և ոչ թե նույնատիպ աղբյուրի հետ հետ, օր.՝ արխիվային փաստաթուղթ, հրապարակում թերթում և հարցազրույց, կամ՝ նամակներ, թերթեր և հարցազրույց, և այլն:

	են մասնակից ուսուցիչներից ստացված ամփոփաթերթերում, որոնք հատվածաբար մեջբերվում են ստորև:
Նախագծի առաջընթացի ներկայացում գարնանային դպրոցի ժամանակ	Որպես նախագծի իրականացման միջանկյալ փուլ՝ Երևանում, Գյումրիում և Դիլիջանում կազմակերպվեցին գարնանային դպրոցներ[12]՝ հնարավորություն տալով նախագծային թիմերին ավելի լավ հասկանալ ընդհանուր թեման, ինչպես նաև ներկայացնել իրենց նախագծի առաջընթացը: Թիմերը հետադարձ կապ ստացան ինչպես մյուս թիմերից, այնպես էլ մենթորներից և փորձագետներից: Այսպիսով, գարնանային դպրոցը նախագծի նախնական տարբերակի քննարկման և հետադարձ կապի յուրօրինակ ձևաչափ էր:
Տվյալների վերլուծություն, համադրում և վերջնարդյունքի /աշխատանքի ստեղծում	Նախագծի իրականացման վերջին փուլում ստացված տվյալների վերլուծության, համադրման հիման վրա ստեղծվում է նախագծի վերջնարդյունքը: Այս փուլում շատ կարևոր է ստացված փաստական նյութից առանձնացնել այն, ինչ պետք է ներառվի վերջնական աշխատանքում և ներկայացնել աշակերտների տեսանկյունից, նրանց ձայնով ու պատկերացումներով: Կարևորվել է նաև հետազոտական մասի ներառումը, այն է՝ հատվածներ հարցազրույցներից, մեջբերումներ աղբյուրներից, լուսանկարներ և այլն: Հետաքրքիր, ստեղծարար լուծումներ տալը նույնպես կարևորվել է:

Նախագծի իրականացման փուլում տվյաների հավաքումը գործնականում.

Ծրագրի մասնակից ուսուցիչների փորձը

«Մեր աշխատանքների համար շատ կարևոր էր անհրաժեշտ գրականության հայթայթումը, որը նույնպես հեշտությամբ կատարվեց: Սկզբում աշակերտներն ուսումնասիրեցին Կապանի հանքարդյունաբերության վերաբերյալ իրենց տան կամ ազգականների գրադարաններում եղած գրքերը:
Մարզային և դպրոցական գրադարաններում, ցավոք, մեր թեմայով գրականություն չգտնվեց: Պետք է ասել, որ հիմնականում անհրաժեշտ գրականությունը գտնվեց հենց անձնական գրադարաններում, ինչն աշակերտներին հաջողվեց կատարել մեծ հետաքրքրությամբ և շատ արագ: Քանի որ աշակերտների մեծ մասի ընտանիքներում կամ բարեկամների շրջանում կային Կապանի հանքարդյունաբերության ոլորտում նախկինում աշխատած կամ այժմ աշխատող մարդիկ, նրանք մեծապես ուղղորդեցին: Այդ հարցում օգնության հասան նաև մեր ավագ սերնդի պատմության ուսուցիչները»:

[12] Գարնանային դպրոցի որոշ մանրամասներ, լուսանկարներ, կարծիքներ ներկայացված են ստորև:

«Քանի որ հարցազրույցների և նյութերի համար պետք էր հանդիպել տարբեր մարդկանց և գնալ այլ բնակավայրեր, նախօրոք ճշտեցինք ցուցակը, թե ում հետ կարելի է խոսել, զանգեցինք, իրազեկեցինք, խնդրեցինք հանդիպում, եթե համաձայնություն ստացանք՝ շտապեցինք հանդիպել: Մեր դպրոցի զինդեկը, տնտեսվարը, պահակը, մեր ծնողները պատրաստակամ էին մեզ օգնել, բնակավայրից բնակավայր տանել, որի համար անչափ շնորհակալ ենք բոլորին: Ամեն անգամ վերադառնալուց հետո քննարկում էինք, տպավորություններ էինք փոխանակում: Բնակավայրեր այցելելիս անդամները փոխվում էին, որպեսզի բոլորն էլ ներդրում ունենան: Այս փուլում ունեցել ենք տարբեր հանդիպումներ, բոլորն էլ իրարից տարբերվող ու հագեցած»:
«Արդեն իրականացրել ենք մի քանի հարցազրույց: Շատ հետաքրքրիր էին բոլոր չորս հարցազրույցները: Առաջին երկուսը գրանցել ենք Գյումրիում: Առաջին հարցազրույցը վարեցինք ֆիլմերում զանգվածային տեսարաններում նկարահանված անձնավորության հետ: Նա ապրում էր այն թաղամասում, որտեղ նկարվել էին ֆիլմերի մեծ մասը, և նկարահանվել էր մի քանի ֆիլմի զանգվածային տեսարաններում: Մյուսը Մհեր Մկրտչյանի թանգարանի զբոսավար Ալեքսանդր Այվազյանն էր: Վերջինս շատ սիրով ու պատրաստակամությամբ զրուցեց երեխաների հետ: Պարզվեց՝ նա ֆիլմերի լավ գիտակ էր և հսկայական ինֆորմացիա փոխանցեց աշակերտներին»:
«Իրականում, կարելի է ասել, դժվարը սկիզբն է, այսինքն՝ երեխաների ինտեգրումը ծրագրին: Հետո, երբ արդեն սկսվում է աշխատանքային փուլը, իրենք հաճույք են ստանում իրենց սովորածից, կարդացածից, հասկացածից: Էլ ավելի հաճույքով մասնակցում և իրագործում են այն ծրագրերը, որոնց իրենց կյանքը, մտերիմների կյանքը աղերս ունի, ներկայի հետ կապ ունի, կամ հետևանքներ են առկա, որոնք իրենք տեսնում են: Աշակերտները բավականին մեծ ոգևորությամբ են ընդունում նման ծրագրերը, որովհետև դրանք ստանդարտ չեն, հետաքրքիր են, մեծ մասը իրենք են անում, իրենք մեկնաբանում, իրենց կարծիքը լսելի է: Նման նախագծերի գլխավոր առավելություններից մեկն էլ այն է, որ դրանք «դասասենյակային ու ձանձրալի չեն»:

Գարնանային դպրոցը որպես նախագծի միջանկյալ փուլում հետադարձ կապի գործիք «Պատմության մրցույթներ 4. 0» ծրագրում

Ծրագրի շրջանակներում անցկացվեց երեք մեկօրյա գարնանային դպրոց մարզերի և Երևանի նախագծային թիմերի համար: Գարնանային դպրոցի նպատակներն էին.

- նախագծային թիմերի (աշակերտներ և ուսուցիչներ) ծանոթացում և շփումներ,
- ընդհանուր թեմայի մասին պատկերացումների խորացում,
- ամենակարևորը՝ նախագծի թիմի, թեմայի և ընթացքի ներկայացում միջոցառման մասնակիցներին,
- մյուս թիմերից և մենթորներից /փորձագետներից կարծիքների և հետադարձ կապի ստացում:

Այսպիսով, գարնանային դպրոցը նախագծի նախնական տարբերակի ներկայացման, քննարկման և հետադարձ կապի մի յուրօրինակ ձևաչափ էր, որը հնարավորություն էր տալիս նախագծի մասին խոսել ավելի մեծ լսարանի հետ, ստանալ մյուս թիմերից իրենց հասակակիցների, ուսուցիչների, ինչպես նաև մենթորների /փորձագետների կարծիքները:

Այս աշխատանքը ավելի վիզուալ, արդյունավետ և օգտակար դարձնելու համար թիմերը նախապես հանձնարարություն էին ստացել պատրաստել *մեկ պաստառ (կամ այլ վիզուալ առարկա), որի միջոցով կներկայացվի թիմի աշխատանքը: Պաստառ պատրաստելիս հարկավոր էր անդրադառնալ հետևյալ հարցերին.*

Ո՞վ է ներկայացնում	Մարզ, դպրոց
Թիմը	Ձեր թիմի մասին այնքան, ինչքան կուզեք, այնպես, ինչպես կուզեք
Թեման	Հետազոտական թեման
Ինչո՞ւ այս թեման	Ներկայացրե՛ք 3 հակիրճ կետով
Երեք նոր բան, որ արդեն սովորել եք այս ընթացքում	- 1 նոր բառ /հասկացություն - 1 նոր պատմական դեմք/անցք, իրողություն - սովորելու մեկ նոր ձև
Մեկ հարց, որի պատասխանը կօգնի ձեզ հետագա աշխատանքում	

Մասնակից թիմերն իրենց պաստառները փակցնում էին դահլիճում իրենց հատկացված տեղում: Յուրաքաչյուր պաստառի մոտ մշտապես ներկա էին 1-2 աշակերտ, որպեսզի պաստառին մոտեցած մասնակիցներին ներկայացնեն իրենց աշխատանքը և պատասխանեն հարցերին: Բոլոր մասնակիցները շրջում էին դահլիճում, ծանոթանում միմյանց աշխատանքներին, հարցերի դեպքում պարզաբանումներ խնդրում տվյալ թիմի անդամներից:

Մասնակիցներին տրվում էր 3 տեսակի կպչուն թերթիկ՝ պաստառների վերաբերյալ հետադարձ կապ տալու համար.

Թեման հետաքրքիր է	Կրեատիվ պաստառ	(Դատարկ թերթիկ, որի վրա կարելի է ցանկացած նշում կատարել)

Յուրաքանչյուր մասնակից այս երեք թերթիկներից ստանում էր 1-ական թերթիկ։ Իր նախընտրած պաստառին այն ամրացնելու համար նա պետք է ծանոթանար մյուս բոլոր թիմերի ներկայացրած աշխատանքներին։ Մեծ թվով թիմերի հետ աշխատելու պարագայում այս մոտեցումը հնարավորություն է տալիս ներգրավել բոլորին, վիզուալիզացնել հետադարձ կապը, ակտիվ շփումների և կարծիքների փոխանակման հնարավորություն ստեղծել։

Երբ հետադարձ կապի այս փուլն ավարտված էր, մենթորները բոլոր մասնակից թիմերին ընդհանրական հետադարձ կապ տվեցին՝ շեշտը դնելով հնարավոր վերանայումների և բարելավումների վրա։

Ստորև տեղադրված լուսանկարները և մասնակիցների արձագանքները արտացոլում են պաստառների բազմազանությունը, ստեղծարարությունը, ինչպես նաև այս գործիքի մասին կարծիքները։

«Աշակերտները բարձրաձայնեցին, որ չէին սպասում նման ձևաչափ. մտածում էին, որ հարց ու պատասխան կլինի, նյութը ցույց կտան և կվերադառնան։

Շաղիկն ու Հենրին ավելացրեցին, որ իրենց առավել դուր եկավ միջոցառման այն հատվածը, երբ ներկայացնում էին իրենց թիմի աշխատանքը։ Առավել պատասխանատու էին իրենց զգացել նախագծի համար կատարվելիք աշխատանքներում»։

«Կոնկրետ աշխատանքների հետ կապված կարևոր էր գարնանային դպրոցի կազմակերպումը, քանի որ մյուս թիմերի աշխատանքներին ծանոթանալը կարծես հնարավորություն էր սեփական աշխատանքները վերանայելու, համեմատելու, նոր գաղափարներ վերհանելու առումով»:

«Ուսանելի և բովանդակալից էր «Գարնանային դպրոցին» մասնակցությունը, որի ընթացքում սովորողները ծանոթացան միջոցառմանը ներկա մասնակիցների աշխատանքներին, փորձի փոխանակում տեղի ունեցավ, ստացան իրենց հետաքրքրող բոլոր հարցերի սպառիչ պատասխանները, լսեցին մենթորների դիտարկումները և ուղղորդումները իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ, ոգևորվեցին իրենց կատարած աշխատանքի արժևորումից, մասնակցեցին հետաքրքիր և ինտերակտիվ մեթոդներով վարվող դասընթացի»:

«Ընդհանրապես սովորողներին ոգևորեց ստեղծված հաճելի, փոխվստահության միջավայրը, ուր անկաշկանդ շփվում էին տարբեր դպրոցների սովորողների հետ, միմյանց հարցեր տալիս, քննարկումներ անում: Կարծում եմ նաև այստեղ սեփական ուժերն ու կարողությունները վերլուծելու, անելիքները վերանայելու, սեփական ուժերի նկատմամբ վստահության ձեռքբերման, որոշների համար՝ նաև կրթությունը կարևորելու ու արժևորելու հարթակ էր»:

«Աշակերտները հատկապես ոգևորվել էին մյուս թիմերի ոգևորիչ խոսքերից և ինքնակպչուն թղթերի վրա գրված արձագանքներից»։

«Շատ հետաքրքիր էր նաև «Գարնանային դպրոցին» մասնակցությունը, տարբեր դպրոցների աշակերտների հետ շփումները, ծանոթությունները, նոր միջավայրը: Ամեն ինչ տրամադրող էր, սովորեցնող, դրական էմոցիաներ տվող, առաջնորդող, այլ նախագծերի մասնակցելու համար կարողություններ, հմտություններ ձևավորող»:



ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՄԻՋՆ. ԴՊՐՈՅ
ԼԵՌՆԱԳՈՐԾ
թիմ
ՍՍՍՐ

ՆԱՄԱԿԱՆԻՇՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 1922-1991թթ
ՄԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՌԻՍԿԵՐԸ
Նախագիծ
ՆԱԽԱԳԻԾ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱՍՏՂԵՐ
?
9
10

Վերջնարդյունքի ստեղծում

Երբ աշխատանքի նախնական տարբերակը (կամ նույնիսկ մի քանի տարբերակ) քննարկվել է, հետադարձ կապ է ստացվել և՛ թիմի բոլոր անդամներից, և՛ ուսուցչից, և՛, միգուցե, այլ մասնագետներից, ծնողներից (Ծրագրի շրջանակում դա արվել է և՛ ամեն թիմի ներսում, և՛ գարնանային դպրոցի ժամանակ), **վերջնարդյունքի վրա աշխատելու ժամանակն է**:

Երկու քայլ, որ շատ կարևոր են այս փուլում.

- Ստացված կարծիքների և առաջարկների հիման վրա վերջնական որոշում կայացնել աշխատանքի /վերջնարդյունքի ձևաչափի մասին: Նախագծային աշխատանքի վերջնարդյունքները կարելի է ներկայացնել բազմաթիվ միջոցներով, այդ թվում սահիկաշար (օգտագործելով PowerPoint, Canva կամ այլ ծրագրեր), էսսե, տեսանյութ, փոդքասթ, պաստառ, բեմական ներկայացում, կայք, բջջային հավելված, առցանց գրքույկ և այլն:
- Որոշել, թե ինչպես պետք է ներկայացվի ստացված տեղեկատվությունը ընտրված ձևաչափի շրջանակում: Նյութը ներկայացնել այնպես, որ լինի ոչ միայն գրավիչ ու հետաքրքիր, այլև ունենա վերլուծական մոտեցում, ընգծվի հետազոտական բաղադրիչը, ներառի հատվածներ հարցազրույցներից կամ հղումներ դրանց:

Կարևոր է:
Որպես ընդհանուր սկզբունք՝ կարևոր է հետևել այն չափանիշներին և սկզբունքներին, որոնք ներկայացվում են հետազոտական նախագծին և դրա վերջնարդյունքին, միշտ ուշադրության կենտրոնում պահել նախագծի նպատակը, խնդիրները, հարցերը:

Նախագծի վերջնարդյունքի վրա աշխատանք.

Ծրագրի մասնակից ուսուցիչների փորձը

«Վերջնարդյունքի տեսքի մասին քննարկումները բավականին բուռն են ընթացել, կարելի է ասել մինչև մայիսի 5-ը[13] մենք դեռ քննարկումներ ունեինք վերջնարդյունքի մասին (այստեղ կարևոր է նշել, որ ցանկացած կատարվող վերջնարդյունքի համար մենք նյութեր էինք հավաքել հետազոտության ընթացքում, որ վերջնարդյունքի ընտրության դեպքում նյութի խնդիր չունենանք): Վերջնարդյունքի ընտրության գլխավոր խնդիրը հետևյալն էր. ի՞նչ վերջնարդյունք ընտրել, որտեղ հնարավորինս բովանդակային և մանրակրկիտ կկարողանանք ներկայացնել մեր կատարած հետազոտությունը: Էսսեների տարբերակը դուրս եկավ քննարկումից, որովհետև յուրաքանչյուր խմբում կար աշակերտ, ով այնքան էր սիրել թեման, որ որոշել էր նաև անհատական աշխատանքով հանդես գալ՝ էսսեի միջոցով: Բազմաթիվ քննարկումների արդյունքում առաջին թիմը ընտրեց պաստառի տարբերակը,

[13] Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ էր սահմանված 2024թ. մայիսի 31-ը:

որը հետազոտության սկզբում չէր էլ դիտարկվել: Որպես ուսուցիչ, կարևոր էր նաև, որ աշակերտներս, ովքեր տիրապետում էին իրենց թեմաներին՝ իրենց ուզած և պատկերացրած ձևով ներկայացնեն իրենց աշխատանքը, ինչին էլ մենք հասանք ամիսներ տևած քննարկումների արդյունքում»:

«Ի սկզբանե որպես նախագծի ներկայացման ձևաչափ ընտրվել էր տեսանյութի ստեղծումը, որը մնաց անփոփոխ հետազոտական աշխատանքի ողջ ընթացքում: Քանի որ մեր ձեռքի տակ արդեն ունեինք անհրաժեշտ պահեստավորված ինֆորմացիան, տեսանյութեր, լուսանկարներ, մնում էր ստեղծել սցենար և աշխատել սյուժեի վրա:
Տեսանյութը ստեղծվել է փաստավավերագրական ֆիլմի տեսքով. ընտրվել է թեմային համապատասխան երաժշտություն, ներառվել են կադրեր հարցազրույցներից, տեսարաններ՝ հին ու նոր հանքերից, կադրերի համեմատություններ խորհրդային անցյալից և ներկայից, լքված բանավանից: Նկարահանումներին և տեսանյութի մեջ ներկա էին թիմի բոլոր անդամները՝ իրենց մասնակցությամբ: Որպես ուսուցիչ՝ այս բոլոր աշխատանքներն իրականացվել են իմ ուղղորդմամբ և խորհրդատվությամբ»:

«Ի սկզբանե որոշվել էր, որ ներկայացնելիս պետք է լիներ սահիկաշար, տեսանյութ, հոդված, բայց աշխատելիս հասկացանք, որ կարելի է նաև ստանալ էլեկտրոնային գիրք:
Աշակերտական թիմում յուրաքանչյուրը կատարել է աշխատանքի իր բաժինը, հետո ընդհանրացրել ենք, ընդհանուր հավաքվել ենք. նախ նոթատետրում գրել են ամեն մեկը իր կատարած աշխատանքը, հետո հավաքել են word տարբերակով, այնուհետև սահիկաշար են պատրաստել: Հետո այդ ամենը ստուգել եմ, շտկումների կարիք լինելու դեպքում քննարկել ենք, որոշել ենք, թե ինչ պետք է արվի, ու աշխատանքը ավարտուն տեսքի ենք բերել»:

«Վերջնարդյունքը ստեղծելուց հետո աննկարագրելի էին թիմի անդամների զգացողությունները և ուրախությունը: Նրանք առաջին անգամ էին նման ձևաչափով և բովանդակությամբ տեսանյութ ստեղծում, որի որակը շատ զարմացրեց և միաժամանակ անսահման ուրախացրեց՝ տեսնելով իրենց երկար և բազմաբնույթ աշխատանքների վերջնակետը: Տեսանյութը դիտելուց հետո երկար ծափահարում էին իրենց աշխատանքին՝ իբրև հաջող դերակատարներ»:

Ամփոփելով կարևոր է հիշել.

- Նախագծի իրականացումն ուսուցչից պահանջում է անմիջական ներգրավում, համակարգում, աջակից ուղղորդում:
- Աշակերտների ինքնուրույն աշխատանքը և թիմի անդամների միջև համագործակցությունը կարևորագույն սկզբունքներ են:
- Այն հանգամանքը, որ վերջնարդյունքը պետք է հրապարակվի աշակերտների ընկերների, ընտանիքի անդամների կամ այլ անծանոթ մարդկանց մոտ, հաճախ ավելի պարտավորեցնող է, քան պարզապես ուսուցչին ներկայացնելը և «լավ» գնահատական ստանալը:

- Վերջնարդյունքը պետք է անցնի մի քանի նախնական տարբերակով, քննարկվի ու մեկնաբանվի, նորից ու նորից վերանայվի:
- Վերջնարդյունքի վրա աշխատելը կարևորագույն փուլերից է, երբ ընտրված ձևաչափից ելնելով՝ նյութի ներկայացման մասին որոշումներ են կայացվում:
- Վերջնարդյունքը ոչ միայն գրավիչ և հետաքրքիր պետք է լինի, այլև ունենա վերլուծական մոտեցում, ընդգծվի հետազոտական բաղադրիչը, ներառի հատվածներ հարցազրույցներից կամ դրանց հղումները: Այն պետք է լուծի նախապես սահմանված հետազոտական խնդիրը և պատասխանի հետազոտության հարցերին:

6. ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ներկայացման կարևորությունը նախագծային ուսուցման մեջ

Այս ուղեցույցում բազմիցս խոսվել է այն մասին, թե որքան կարևոր է հետազոտական նախագծի արդյունքում ստեղծված աշխատանքի /վերջնարդյունքի ներկայացումը, և որոնք են դրա պատճառները: Կարճ անդրադառնալով վերջնարդյունքի ներկայացման կարևորությանը՝ առանձնացնենք մի քանի գործոն.

- **Վերջնարդյունքի ներկայացման և գնահատման կապը:** Եթե նախագիծն իրականացվում է առարկայական ծրագրի շրջանակներում, և աշակերտները պետք է գնահատվեն, ապա ներկայացումը իրականացման հետ միասին գնահատվող կարևոր բաղադրիչներից է: Իհարկե, ուսուցիչը պետք է որոշի, թե արդյո՞ք ձևավորող գնահատման մեջ ներառի հանրային ներկայացումը: Հնարավոր է այն տարբերակը, երբ թիմը ներկայացնի վերջնարդյունքը ուսուցչին, գնահատվի, և հետո միայն կազմակերպվի հանրային ներկայացում:
- **Հանրային ներկայացման հետ կապված աշակերտների ոգևորությունը և պատասխանատվությունը:** Ընկերներին, ծնողներին, համայնքին նախագծի վերջնարդյունքը ներկայացնելը աշակերտների համար պարտավորեցնող է: Այն ավելի է արժևորվում, քան ֆորմալ գհահատականը:
- **Նախագծի ավարտի տոնական և հանդիսավոր բնույթը,** որտեղ աշակերտները առաջնային դերում են, իրենք են ողջունում հյուրերին, ներկայացնում իրենց վերջնարդյունքը, պատասխանում հարցերին, բացատրում, գովեստներ լսում, և այլն:

Ներկայացման մոտեցումը Ծրագրում

«Պատմության մրցույթներ 4.0» ծրագրի շրջանակներում հետազոտական նախագծի վերջնարդյունքների ներկայացումը կատարվել է երեք հիմնական ձևով.

1. Աշխատանքները ներկայացվել են մասնագիտական ժյուրիին, որը, ըստ նախապես սահմանված չափանիշների, գնահատել է աշխատանքները և որոշել հաղթողներին ու մրցանակները:
2. Մրցանակաբաշխության հանրային միջոցառման ընթացքում նույնպես տարբեր ձևաչափերով ներկայացվել են աշխատանքները:
3. Բոլոր աշխատանքները տեղադրվել են Ծրագրի կայքում, ինչպես նաև ներառված են գործիքատուփում որպես Հավելված 6:

Աշխատանքների ներկայացման առաջին երկու ձևերը մանրամասն ներկայացված են ստորև:

Աշխատանքների ներկայացումը ժյուրիին և գնահատումը

Աշխատանքները գնահատելիս ժյուրին առաջնորդվել է հետևյալ չափանիշներով[14]՝

- Աշխատանքն ամբողջականորեն ներկայացնում է ընտրված թեմայի շրջանակներում կատարված հետազոտական նախագիծը – ***առավելագույնը 10 միավոր:***
- Հետազոտության համար ընտրված ձևաչափը լավագույնս է արտացոլում նախագծի բովանդակությունը -***առավելագույնը 5 միավոր:***
- Աշխատանքի հիմքում ընկած հետազոտական մասը տեսանելի է, հիմնավոր, հավաստի աղբյուրների վրա հիմնված, տեղեկություններ հավաքելու համար օգտագործվել է առնվազն 3 տեսակի աղբյուր – ***առավելագույնը 15 միավոր***:
- Հավաքված տեղեկությունները պատշաճ վերլուծվել են -***առավելագույնը 10 միավոր***:
- Հետազոտական նախագծի արդյունքները ներկայացված են ստեղծագործ մոտեցումներով – ***առավելագույնը 5 միավոր***:

Ժյուրիի բոլոր հինգ անդամներն առանձին-առանձին ծանոթացել են ներկայացված աշխատանքներին և գնահատել դրանք: Այնուհետև, յուրաքանչյուր աշխատանքի ստացած միավորները միջինացվել են: Ժյուրին և կազմակերպչական թիմը միասին որոշել են, որ առավելագույն 40 միավորից 35 և բարձր միավոր ստացած աշխատանքները դիտարկվեն մրցանակների համար: Լրացուցիչ քննարկման արդյունքում առանձնացվել են հետևյալ մրցանակային անվանակարգերը.

[14] Հարկ է նշել, որ նման գնահատումը տարբերվում է ակադեմիական ձևավորող գնահատումից, որն իրականացվում է նախագծային ուսուցման ժամանակ, և որը ներառված չի եղել այս Ծրագրում:

	ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿ (3 աշխատանք)
	2-ՐԴ ՏԵՂ ՄՐՑԱՆԱԿ (3 աշխատանք)
	3-ՐԴ ՏԵՂ ՄՐՑԱՆԱԿ (4 աշխատանք)
	ՀԱՄԱԿՐԱՆՔԻ ՄՐՑԱՆԱԿ (3 աշխատանք)

Համակրանքի մրցանակ սահմանել էր Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը որակյալ էսսե գրելու համար, ինչպես նաև ժյուրիի երկու անդամ՝ իրենց նախընտրած թիմերին՝ որոշակի հիմնավորումներով:

Հետազոտական նախագիծ իրականացրած բոլոր թիմերը և անհատները ստացել են պատվոգրեր:

Աշխատանքների ներկայացումը մրցանակաբաշխության հանրային միջոցառմանը

Ավանդաբար, «Պատմության մրցույթներ» ծրագրում մրցույթն ամփոփվում է մրցանականաբաշխության հանրային միջոցառմամբ, որին մասնակցում են հաղթող թիմերը, ուսուցիչները և փորձագետները, կազմակերպիչները և հյուրերը: Սա հանդիսավոր և ոգևորիչ արարողություն է, որտեղ աշակերտները և ուսուցիչները ստանում են իրենց մրցանակները, մեկ անգամ ևս ներկայացվում են նրանց աշխատանքները, հնչում են շնորհավորական և շնորհակալական խոսքեր:

«Պատմության մրցույթներ 4.0» ծրագիրն առանձնանում էր նրանով, որ մրցանակաբաշխությանը զուգընթաց կազմակերպվեց այսպես կոչված «այլընտրանքային ցուցահանդես»՝ հետազոտական նախագծերի մասին հետաքրքիր ոճով պատմող ցուցանմուշների ներկայացում, այդ թվում՝

- Բոլոր հաղթող թիմերի (բացառությամբ գլխավոր մրցանակ ստացողների) ներկայացրած տեսաֆիլմերից հատվածներ ցուցադրվել են նախքան մրցանակաբաշխության պաշտոնական մեկնարկը՝ հնարավորություն տալով թիմերին և հյուրերին պատկերացում կազմել աշխատանքների մասին:
- Գլխավոր մրցանակները հանձնելու պահին ցուցադրվել են այդ մրցանակներին արժանացած թիմերի աշխատանքներից հատվածներ:

Այլընտրանքային ցուցահանդեսի ամենահետաքրքիր մասը, սակայն, թիմերի գաղտնատուփերն էին, որոնցում յուրաքանչյուր մասնակից թիմից ստացված լուսանկար էր, ինչպես նաև նախագծից իրենց տպավորությունների մասին պատմող տեքստ, կամ հատվածներ իրենց իրականացրած այն հարցազրույցներից, որոնք իրենց ամենից շատն էին հուզել։

Տուփերը բացվում էին հետևյալ կերպ.

- Երբ ազդարարվում էր մրցանակի անվանակարգը, հյուրերից, մենթորներից կամ կազմակերպիչներից որևէ մեկը տուփը ձեռքին բեմ էր բարձրանում, կարդում դրանում եղած գրառումը, որից արդեն թիմի համար պարզ էր դառնում, որ մրցանակն իրենցն է։ Լուսանկարները և գրառումները փակցվում էին «Ամփոփապատի» վրա։
- Երբ բոլոր մրցանակները հանձնվեցին, բեմ հրավիրվեցին ներկա թիմերից աշակերտներ, որոնք բացեցին նաև միջոցառմանը չմասնակցող մյուս թիմերի տուփերը, ընթերցեցին նրանց ուղերձները, որոնք, լուսանկարների հետ միասին, նույնպես տեղ գտան «Ամփոփապատի» վրա։

Այս լուսանկարները պատկերացում են տալիս նախագծերի այլընտրանքային ցուցադրման նման մոտեցման մասին։

vhs
Körber Stiftung
EUSTORY
ԱՍՓՈՓԱՊԱՏ
«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԵՐ 4.0: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱՆԱՅԻՆ ԴԱՍԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԻՔԱՎԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՄԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆԵՐԸ
ՄԱՐԴԻԿ, ՋԱՅՆԵՐ, ՀՈՒՇԵՐ...
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ...

Ամփոփելով, կարևոր է հիշել.

- Վերջնարդյունքի ներկայացումը նախագծային ուսուցման կարևորագույն տարրերից է, որը խթանում է աշակերտների ոգևորությունը և պատասխանատվությունը, նրանց հնարավորություն է տալիս տոնել նախագծի ավարտը՝ դրա արդյունքը հանրայնորեն ներկայացնելով:
- Վերջնարդյունքի հանրային ներկայացումը կարող է լինել կամ չլինել ձևավորող գնահատականի մաս: Որոշումն ուսուցչինն է:
- Վերջնարդյունքը կարող է գնահատվել որպես առարկայից ձևավորող գնահատականի մաս, բայց, ինչպես այս Ծրագրում, այն կարող է գնահատվել մասնագիտական ժյուրիի կողմից:
- Եվ որ ամենակարևորն է՝ անկախ նրանից, թե վերջնարդյունքը ներկայացվում է ուսուցչին, թե ժյուրիին, նախընտրելի է, որ այն ներկայացվի նաև դպրոցում, համայնքում, ծնողներին, հետաքրքրված անձանց:

ԱՆԿԱԽ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻՑ ԿԱՄ ՄՐՑԱՆԱԿԻՑ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԳԻԾՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՋԱՑՆԻ:

7. ԳՈՐԾԻՔԱՏՈՒՓ

Գործիքքատուփը ներառում է բոլոր վեց հավելվածները, որոնք հիշատակվում ենք այս գործնական ուղեցույցում, ինչպես նաև երկու լրացուցիչ նյութ, որոնք ևս կարող են օգտակար ռեսուրս հանդիսանալ նախագծային աշխատանքներ իրականացնելիս: Գործիքատուփը կարող եք գտնել այս հղումով.
https://drive.google.com/drive/folders/1llHC4OvgymVe4U0bOh7F8YXVOB5k0wnW?usp=sharing